

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱԶԱՔԻՄԻԱԿԱՆ ՃՅՈՒՂԻ
ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածը Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության գազաքիմիական ճյուղի վերակառուցման ծրագրին՝ համաձայն հավելված N1-ի:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության գազաքիմիական ճյուղի վերակառուցման ծրագրի իրականացման միջոցառումների պլանը՝ համաձայն հավելված N2-ի:

Ծրագիր

Հայաստանի Հանրապետության գազաքիմիական ճյուղի զարգացման

Գազաքիմիական ճյուղը ավանդաբար հանդիսացել է Հայաստանի Հանրապետության տնտեսական համակարգի համակարգաստեղծ տարր: Ծյուղը ձևավորող խոշորագույն կազմակերպությունները հիմնադրվել են 20-րդ դարի առաջին կեսում՝ ԽՍՀՄ նավթաքիմիական համալիրի շրջանակներում: Հայաստանի Հանրապետության գազաքիմիական ճյուղի համակարգաստեղծ կազմակերպություն է հանդիսանում «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ն, որը տիրապետում է ավելի քան 20 մակնիշի քլորոպրենային կաուչուկների և լատեքսների տեխնոլոգիաների՝ ինչպես ացետիլենային տեխնոլոգիայի (ացետիլենի ստացման համար որպես հումք օգտագործելով բնական գազը), այնպես էլ բութադիենային: Գործարանն ունի սեփական գիտահետազոտական համալիր, որի հիմքերը դրվել են խորհրդային տարիներին՝ պոլիմերային արտադրանքների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի ստեղծմամբ, որը ԽՍՀՄ-ում քլորոպրենային կաուչուկների գծով գլխամասային կազմակերպություն էր: Առավելագույն արտադրողականության ժամանակաշրջանում (1987 թ.) Նաիրիտի արտադրանքը կազմում էր քլորոպրենային կաուչուկի համաշխարհային շուկայի 15%-ը:

Ծյուղի անկումն սկսվեց նրանից հետո, երբ 1989 թվականին արտադրությունն ամբողջությամբ փակվեց բնապահպանական նկատառումներով: ԽՍՀՄ-ի փլուզմից հետո արտադրության ծավալները կտրուկ նվազեցին՝ պայմանավորված նախկին ԽՍՀՄ հանրապետությունների տնտեսական վիճակով, որոնք արտադրանքի հիմնական սպառողներ էին, ինչպես նաև համաշխարհային արտադրողների հետ մրցակցության ի հայտ գալով, տարածաշրջանի աշխարհաքաղաքական լարված իրավիճակով և Հայաստանի տնտեսական շրջափակմամբ: Գործարանի աշխատանքը մասնակիորեն վերականգնվեց 1993 թվականից:

Ծյուղում իրադրության վիճակի հերթական վատացումը վրա հասավ 2009 թվականին՝ կապված համաշխարհային ճգնաժամի հետ. արտադրության ծավալները զգալիորեն կրճատվեցին: Այդ նույն տարում գործարանը տեխնոլոգիական պարապորդի մեջ էր, իսկ 2010 թվականին լիովին կանգնեցվեց, ինչով և բացատրվում է վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում քիմիական արտադրության զգալի անկումը: Մինչև 2011 թվականի օգոստոս ամիսը «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ն կոնսերվացված է: Ըստ ֆինանսական հաշվետվության տվյալների կուտակած վնասները մոտենում են կազմակերպության տեխնիկական անկարողության մակարդակին, բարձր է հիմնական ֆոնդերի մաշվածությունը:

Չնայած խորացող ճգնաժամային երևույթներին, գազաքիմիական ճյուղը պահպանում է ռազմավարական արժեքը Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգի համար: Առաջին հերթին, դա կապված է գործարանի ահռելի սոցիալական նշանակության հետ, վերջինս նույնիսկ արտադրության անկման պայմաններում հանդիսանում է ավելի քան 2700 մարդկանց գործատու: Սոցիալական իրավիճակը ճյուղում բնութագրվում է լուրջ լարվածությամբ, որը կապված է աշխատավարձի անկանոն վճարումների հետ և այն փաստով, որ աշխատակիցների մեծ մասը գտնվում է հարկադիր արձակուրդում: Սոցիալական խնդիրներն իրենց արտացոլումն են գտել մի շարք բողոքի զանգվածային ակցիաներում, որոնք կազմակերպվել էին գործարանի աշխատակիցների կողմից 2010 թ. նոյեմբեր և 2011թ. հունիս ամիսներին:

Այն մեծ արժեքը, որն ունի Նաիրիտը քիմիական արդյունաբերության և տնտեսության հարակից ճյուղերի համար, թույլ է տալիս խոսել ընդհանուր առմամբ Հայաստանի տնտեսությունում գործարանի համակարգաստեղծ դերի մասին: Այսպես, գործարանն իր գործունեության ժամանակաշրջանում հանդիսանում էր Հայաստանում էլեկտրաէներգիայի խոշորագույն սպառողներից մեկը, ապրանքաշրջանառության մեջ ուներ զգալի մասնաբաժին, ապահովում էր արտահանումների զգալի մասը: Արտադրական հզորությունների անմիջական արդիականացումն ու գործարկումը թույլ կտային լուծել տնտեսական և սոցիալական խնդիրների մի ամբողջ համալիր: Սակայն հիմնական դրական արդյունքը կարող է կապվել ինտեգրացնող կապերի ստեղծմամբ (վերականգնմամբ), բազմապատկման էֆեկտի գործարկմամբ, արդյունաբերության հարակից ճյուղերի և ծառայություններ մատուցող կազմակերպությունների բեռնվածության ավելացմամբ:

Վերը նկարագրած անբարենպաստ միտումները, որոնք ձևավորվել են գազաքիմիական ճյուղում, կանխորոշում են առկա հիմնախնդրի բարդությունն ու համակողմանիությունը: Միևնույն ժամանակ, հիմնախնդրի լուծումը բացառապես տնտեսական տեսանկյունից նպատակահարմար չէ: Ճյուղի կառուցվածքաստեղծ կազմակերպության՝ «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի բարեփոխումներին անհրաժեշտ է համակարգային մոտեցում՝ սոցիալական և նորարարական հիմնախնդիրների, և իհարկե քաղաքական ու աշխարհաքաղաքական գործոնների համատեքստում:

Այս կապակցությամբ, գազաքիմիական ճյուղի վերակառուցման օպտիմալ ռազմավարություն կարելի է համարել միջգերատեսչական կլաստերի զարգացումը՝ հիմնված «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի տեխնոլոգիական բազայի վրա: Կլաստերային ռազմավարության հիման վրա գազաքիմիական ճյուղի վերակառուցման օպտիմալ ռազմավարության մշակումն ու իրականացումը թույլ կտա ապահովել.

1. արդյունաբերական հզորությունների վերականգնումը և զարգացումը, ինչպես նաև համակարգաստեղծ կազմակերպության ընդունելի շահութաբերություն:
2. միջգերատեսչական կլաստերի համալիր զարգացում, որում բուն «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ն հանդես կգա որպես խարսխային ձեռնարկություն, կլաստերի զարգացման լոկոմոտիվ;

3. գազաքիմիական ճյուղի արտադրական տեսականու ընդլայնում՝ կլաստերի մասնակիցների միջև ռիսկերի բաշխման նպատակով;
4. նորարարության ուղղվածության ուժեղացում՝ նորարարության ենթակառուցվածքների, հարակից ճյուղերում փոքր կազմակերպությունների գոտու, և «սպինոֆֆ» տիպի բազմաթիվ փոքր կազմակերպությունների ստեղծման հաշվին՝ առկա տեխնոլոգիական պոտենցիալի դինամիկ առևտրայնացման համար;
5. տարածաշրջանի երկրների հետ ավանդական կապերի ակտիվացում՝ իրացման ավանդական շուկաներում դիրքերի ամրապնդման, հումքային ռեսուրսների կայուն մատակարարման ապահովման և միջպետական կապերի վրա հիմնված ենթակառուցվածքային օբյեկտների զարգացման համար:

Հիմնախնդրի ծրագրային մեթոդով լուծման նպատակահարմարության հիմնավորում

Ներկայումս հնարավոր չէ արդյունավետ լուծել Հայաստանի Հանրապետության գազաքիմիական ճյուղի վերակառուցման հիմնախնդիրները միայն գործող շուկայական մեխանիզմների օգտագործման հաշվին: Դա կարող է իրականացվել ծրագրային-նպատակային մեթոդի հիմքի վրա, որի արդյունավետությունը պայմանավորված է դրա համակարգային, ինտեգրացիոն բնույթով, ինչը թույլ կտա կենտրոնացնել ռեսուրսները գազաքիմիական կազմակերպությունների և հարակից ճյուղերի վերականգնման և զարգացման առաջնային ուղղությունների վրա:

Ծրագրի նպատակը

Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռի ցուցանիշների լավացում՝ արտահանմանն ուղղված գազաքիմիական ճյուղի զարգացման և ներմուծվող պատրաստի արտադրանքի մասնակի փոխարինման հաշվին:

Ծրագրի իրականացման ընթացքում լուծվող խնդիրները

Միջոցառումների համալիր իրականացում, որը կապահովի ճյուղային կլաստերի արդյունավետ զարգացումը՝ «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի տեխնոլոգիական հիմքի վրա, ինչը կնպաստի.

- համաշխարհային գազաքիմիական արդյունաբերության շուկաներում Հայաստանի դիրքի վերականգնմանը՝ երկրի համար ավանդական քլորոպրենային կաուչուկի և զուգակցող արտադրանքի հատվածում;
- ներմուծման մասնակի փոխարինմանը և գազաքիմիական կազմակերպությունների և հարակից ճյուղերի արտահանման ուղղվածության ուժեղացմանը;
- բնապահպանական հիմնախնդիրների լուծման նոր մոտեցումների զարգացմանը՝ կապված ճյուղերի կազմակերպությունների գործունեության հետ;
- սոցիալական հիմնախնդիրների լուծմանը՝ պայմանավորված համակարգաստեղծ կազմակերպությունների ընթացիկ հիմնախնդիրներով:

Հիմնական ծրագրային միջոցառումները

Ծրագրի շրջանակներում կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

1) Ծյուղի ֆինանսական առողջացման միջոցառումներ, ներառյալ.

- Միջազգային կազմակերպությունների հանդեպ ՀՀ գազաքիմիական ճյուղի համակարգաստեղծ կազմակերպությունների պարտավորությունների կարգավորում:
- Ծյուղի կազմակերպությունների աշխատակիցների աշխատավարձերի պարտքերի կարգավորում:
- Հումք և էներգառեսուրսներ մատակարարողների հանդեպ ՀՀ գազաքիմիական ճյուղի համակարգաստեղծ կազմակերպությունների պարտավորությունների կարգավորում:
- ՀՀ Կառավարության կողմից ճյուղի ֆինանսական առողջացմանն ուղղված արտակարգ միջոցառումների կարճաժամկետ պլանների մշակում;
- Ծյուղի առանցքային կազմակերպությունների ֆինանսական առողջացման միջնաժամկետ պլանների և զարգացման ռազմավարական պլանների համաձայնեցում:

2) Գազաքիմիական ճյուղի կարգավորման պետական մեխանիզմների բարելավում, ներառյալ.

- Ծյուղի վերակառուցման Ծրագրի համար հատկացվող միջոցների նպատակային օգտագործման հսկողության մեխանիզմների մշակում:
- Գազաքիմիական ճյուղի կազմակերպություններում կառավարման համակարգի օպտիմալացում, ներառյալ նոր օպերատորի հետ պայմանագրի կնքման միջոցառումները՝ նպատակաուղղված համակարգաստեղծ կազմակերպության վերակառուցման ծրագրի իրականացմանը, ինչպես նաև ոլորտի կազմակերպությունների կողմից որակի մենեջմենթի համակարգի, բնապահպանական մենեջմենթի համակարգի, առողջության պահպանության և աշխատանքի անվտանգության ապահովման մենեջմենթի համակարգի միջազգային սերտիֆիկատների ստացման միջոցառումները:

3) Գույքային համալիրի վերակառուցում և տեխնոլոգիական աուդիտ, ներառյալ.

- Ծյուղի վերակառուցման Ծրագրում ներառված կազմակերպությունների հիմնական ֆոնդերի աուդիտի անցկացում և դրա արդյունքներով Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացության նախապատրաստում:
- Ծյուղի վերակառուցման Ծրագրում ներառված կազմակերպությունների գույքային համալիրի վերակառուցման պլանի մշակում:
- Ծյուղի կազմակերպությունների մտավոր սեփականության ռեգիստրի ստեղծում:

- Ծրագրի մասնակից ճյուղի կազմակերպությունների կողմից մշակվող և կիրառվող տեխնոլոգիաների լիցենզային մաքրության պաշտպանման և ապահովման միջոցառումների պլանի մշակում:
- Ճյուղի կազմակերպությունների անկախ համալիր բնապահպանական փորձաքննության անցկացում:

4) Ենթակառուցվածքային օբյեկտների վերականգնումը և զարգացումը, ներառյալ.

- Էներգաապահովման ճյուղային նոր համակարգի ստեղծում, ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և ՀՀ կառավարության կողմից հաստատում:
- «Նաիրիտ գործարան» ՓԲԸ համակարգաստեղծ կազմակերպության ջրամատակարարման գործող համակարգերի վերակառուցում և նոր համակարգերի շինարարություն, ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և հաստատում:
- «Նաիրիտ գործարան» ՓԲԸ համակարգաստեղծ կազմակերպության սառնամատակարարման գործող համակարգերի վերակառուցում և նոր համակարգերի շինարարություն, ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և հաստատում:
- «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի գիտահետազոտական բազայի հիման վրա տեխնոպարկի (կամ տեխնիկաներդրումային տիպի հատուկ տնտեսական գոտու) ստեղծում:
- Գազաքիմիական և հարակից ճյուղերի փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման աջակցության պետական ծրագրի մշակում: «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ համակարգաստեղծ կազմակերպության շուրջ «նորարարական գոտու» ստեղծում:
- Գազաքիմիական ճյուղի լոգիստիկայի կատարելագործման համար տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացման միջազգային ծրագրերի՝ ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած պորտֆելի մշակում:

5) Գազաքիմիական և հարակից ճյուղերի արտադրական հզորությունների վերականգնում, վերակառուցում և նորերի շահագործման հանձնում, ներառյալ.

- «Նաիրիտ գործարան» ՓԲԸ համակարգաստեղծ կազմակերպության արտադրական հզորությունների վերականգնում, վերակառուցում և շահագործման հանձնում, ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում և հաստատում:
- «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի հիման վրա ճյուղային կլաստերի նոր արտադրությունների ստեղծում, ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմումը և հաստատումը:

6) **Բնապահպանական միջոցառումներ.**

- գազաքիմիական ճյուղի արդիականացման հետևանքների անկախ բնապահպանական փորձաքննության իրականացում,
- հեղուկացված գազերի իզոթերմիկ պահպանման պահոցների կիրառում,
- ցածր արդյունավետության էլեկտրական ֆիլտրերի փոխարինում (ներկայումս առկա են ավելի ժամանակակից գտիչներ),
- գազաանջատման արտադրամասերում մխոցային ճնշակների փոխարինում տուրբոճնշակներով,
- քլորոպրենային կաուչուկների արտադրության համար կաուչուկի չորանոցների փոխարինում՝ օդի նվազ ծախս ունեցող ժամանակակից տեսակներով,
- քլորոպրենային կաուչուկի արտադրամասերում օդափոխիչ ագրեգատների կողմից արտանետվող և օդում պարունակվող օրգանիկ կատալիտիկ լրայրման համակարգի ներդրում,
- օրգանիկ կատալիտիկ լրայրման լրացուցիչ վառարանների ներդրում,
- գազազերծումից հետո լատեքսում պարունակվող մոնոմերների և, հետևաբար, կաուչուկի չորացման ընթացքում դրանց արտանետման նվազեցում:

Նախագծի իրականացման հիմնական ռիսկերին են դասվում.

- տարածաշրջանում ինտեգրացիոն էֆեկտների թուլացումը, ինչը բերում է հումքի մատակարարման և արտադրանքի իրացման հետ կապված տրասպորտային խնդիրների սրմանը,
- ճյուղի հիմնական «խաղացողների» կողմից արտադրական հզորությունների ավելացման արդյունքում մրցակցային պայքարի ուժեղացումը, միջազգային իրացման շուկաների աշխարհագրական տեղաշարժը,
- արտադրանքի իրացման ներքին շուկաների բացակայությունը/թուլությունը,
- «Նաիրիտ գործարան» ՓԲԸ համակարգաստեղծ կազմակերպության հիմնական արտադրությունն անհրաժեշտ է գործնականում թողարկել զրոյից, արտադրական ու օժանդակ հզորություններն ունեն բարձր մաշվածություն, շահագործման երկարատև փորձի բացակայություն՝ մեծ ծավալների արտադրության պայմաններում, տեխնոլոգիական ընթացքի խափանման հնարավորություն,
- «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ կողմից սպառողների նկատմամբ, ինչպես նաև ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ մատուցողների կողմից համակարգաստեղծ կազմակերպության նկատմամբ դատական հայցերի մեծ քանակ,
- բնապահպանական ռիսկեր՝ պայմանավորված օգտագործվող արտադրական տեխնոլոգիաների բնույթով:

Միջոցառումների իրականացման ժամկետները և պատասխանատուները սահմանված են « Հայաստանի Հանրապետության գազաքիմիական ճյուղի վերակառուցման ծրագրի իրականացման միջոցառումների պլանում» (հավելված 2):

Ծրագրի պաշարներով ապահովվածությունը

Ենթադրվում է, որ Ծրագրի ֆինանսավորման ընդհանուր ծավալը բոլոր աղբյուրների հաշվին կկազմի 400 մլն. ԱՄՆ դոլար՝ ԵվրԱզՏՀ Հակաճգնաժամային Ֆոնդի միջոցների հաշվին:

ԵվրԱզՏՀ Հակաճգնաժամային Ֆոնդի միջոցները ծրագրավորվում է ուղղել հիմնականում ֆինանսական առողջացման, ճյուղի համակարգաստեղծ կազմակերպության կառավարման համակարգի կատարելագործմանը, ենթակառուցվածքային օբյեկտների և արտադրական հզորությունների վերականգմանն ուղղված առաջնահերթ միջոցառումների իրականացման համար:

Ծրագրի իրականացման մեխանիզմը

Ծրագրի իրականացումը նախատեսում է պետական ներգործության բոլոր միջոցների և մեթոդների օգտագործում՝ իրավանորմատիվային կարգավորում, վարչական միջոցներ, բյուջետային աջակցման ուղղակի և անուղղակի մեթոդներ, կազմակերպչական, քաղաքական և տեղեկատվական աջակցության մեխանիզմներ:

Ծրագրի իրականացման ընթացքի համակարգման նպատակով ստեղծվում է Ծրագրի Համակարգող Խորհուրդ, որը ձևավորվում է պետական կառավարման մարմինների (օրենսդիր և գործադիր), գիտահետազոտական կազմակերպությունների, գազաքիմիական ճյուղի կազմակերպությունների և ԵվրԱզՏՀ Հակաճգնաժամային Ֆոնդի ներկայացուցիչներից: Ծրագրի Համակարգող Խորհրդի նախագահն է հանդիսանում Հայաստանի Հանրապետության վարչապետը: Ծրագրի Համակարգող Խորհրդի կանոնակարգը և կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

Ծրագրի Համակարգող Խորհրդի հիմնական խնդիրներն են հանդիսանում Ծրագրի առանձին միջոցառումների իրականացման պլանների հաստատումը, պատվիրատու- Ծրագրի համակարգողի գործունեության համակարգումը, ծրագրավորված միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ նյութերի քննարկումը և դրանց ճշտման վերաբերյալ առաջարկությունների ներկայացումը, ինչպես նաև՝ Ծրագրի իրականացման արդյունքների քննարկումը, Ծրագրի իրականացման ընթացքում առաջացող գիտական, տեխնիկական և կազմակերպչական հիմնախնդիրների բացահայտումն ու դրանց լուծմանն ուղղված առաջարկությունների մշակումը:

Ծրագրի իրականացման ընթացիկ կառավարումն ու վերահսկումը կատարում են պետական պատվիրատու-Ծրագրի համակարգողը և Ծրագրի պետական պատվիրատուները:

Պետական պատվիրատու- Ծրագրի համակարգող է հանդիսանում Հայաստանի Հանրապետության էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունը:

Ծրագրի պետական պատվիրատուներ են հանդիսանում.

- Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը,
- Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը,

- Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությունը,
- Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությունը,
- Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը,
- Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը:

Պետական պատվիրատու- Ծրագրի համակարգողն իրականացնում է հետևյալ գործառույթները.

- իր իրավասությունների սահմաններում մշակում է Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ նորմատիվ իրավական ակտեր,
- սահմանված կարգով նախապատրաստում է Ծրագրի միջոցառումների ճշտման ամենամյա առաջարկություններ հերթական ֆինանսական տարվա համար, ճշտում է դրանց համար անհրաժեշտ ծախսերը, պատասխանատվություն է կրում Ծրագրի ընդհանուր իրականացման և հատկացվող միջոցների արդյունավետ օգտագործման համար,
- համակարգում է Ծրագրի միջոցառումների նախապատրաստմանն ու իրականացմանն ուղղված պետական պատվիրատուների գործունեությունը,
- կազմակերպում է Ծրագրի իրականացման ընթացքի և արդյունքների տեղեկատվական իրազեկումը,
- Ծրագրի պետական պատվիրատուների ամենամյա զեկույցների հիման վրա նախապատրաստում և Համակարգող Խորհուրդ է ներկայացնում հաշվետվություն՝ Ծրագրի շրջանակներում աշխատանքների ընթացքի, ձեռք բերված արդյունքների և ֆինանսական միջոցների օգտագործման արդյունավետության վերաբերյալ,
- անհրաժեշտության դեպքում Համակարգող Խորհրդին ներկայացնում է առաջարկություններ Ծրագրի ճշտման վերաբերյալ:

Ծրագրի պետական պատվիրատուներն իրականացնում են հետևյալ գործառույթները.

- նախապատրաստում են Ծրագրի միջոցառումների իրականացման պլանները,
- անցկացնում են Ծրագրի միջոցառումների իրականացման մոնիթորինգ, գնահատում են դրանց ցուցանիշների արդյունավետությունը և Ծրագրի նպատակային ցուցանիշներին համապատասխանությունը:
- վարում են Ծրագրի իրականացման հաշվետվությունը,
- իրականացնում են Ծրագրի յուրաքանչյուր միջոցառման գծով աշխատանքներ և ծառայություններ կատարողների, ապրանքների մատակարարների ընտրությունը:

Ծրագրի իրականացմանը ԵվրԱզՏՀ Հակաճգնաժամային Ֆոնդի մասնակցության ձևերն ու մեխանիզմները որոշվում են միջազգային համաձայնագրով՝ կնքված Ֆոնդի և Հայաստանի Հանրապետության Կառավարության միջև:

Ծրագրի սոցիալ-տնտեսական արդյունավետության գնահատում

Ծրագրի սոցիալ-տնտեսական արդյունավետության գնահատումն իրականացվելու է նպատակային ինդիկատորների համակարգի հիման վրա, որը ներառում է ՀՀ գազաքիմիական ճյուղի վերակառուցման Ծրագրի իրականացման արդյունքների ինչպես քանակական, այնպես էլ որակական բնութագրերը:

Ծրագրային ինդիկատորների արժեքների մոնիթորինգը հնարավորություն կընձեռնի արդյունավետ կերպով ճշտել և ուղղել դրված խնդիրները և իրականացվող միջոցառումների բովանդակությունը:

Ծրագրի հաջող իրականացումը թույլ կտա մինչև 2021թ. հասնել հետևյալ արդյունքներին.

- գազաքիմիական ճյուղի մասնաբաժնի ավելացում ՀՆԱ-ի աճում,
- արտաքին առևտրի շրջանառության կառուցվածքի բարելավում, Հայաստանի Հանրապետության տնտեսության կախվածության թուլացում գիտատար քիմիական արտադրանքի ներկրումից, բարձր տեխնոլոգիական արտադրանքի արտահանման ընդլայնում, արտահանումից հասույթների ավելացում,
- Հայաստանի Հանրապետության բյուջե հարկային եկամուտների ավելացում,
- գազաքիմիական ճյուղում արդյունավետ շուկայական ուղղվածության, ինքնազարգացման ներուժ ունեցող բիզնես կառույցների ձևավորում,
- գազաքիմիական ճյուղի և հարակից ճյուղերի կազմակերպությունների հիմնական ֆոնդերի ինովացիոն ակտիվության և նորարացման մակարդակի բարձրացում,
- գազաքիմիական ճյուղում աշխատանքի արտադրողականության բարձրացում,
- աշխատանքային տեղերի պահպանում և նորերի ստեղծում,
- գիտատեխնիկական կադրերի տաղանդավոր մասի արտահոսքի կանխում այլ ճյուղեր և արտերկիր,
- որակավորված գիտատեխնիկական կադրերի նկատմամբ պահանջարկի մեծացում, դրանց տարիքային կառուցվածքի բարելավում:

Հավելված 2

ՀՀ Կառավարության

«.....» 2011թ.

N^o որոշման

Պլան

Հայաստանի Հանրապետության գազաքիմիական ճյուղի վերակառուցման ծրագրի իրականացման միջոցառումների

N ^o	Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Ժամկետ
Ոլորտի ֆինանսական առողջացման միջոցառումներ			
1	ՀՀ գազաքիմիական ճյուղի համակարգաստեղծ կազմակերպությունների՝ միջազգային կազմակերպությունների հանդեպ ունեցած պարտավորությունների կարգավորում	ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	30.10.2011թ.
2	Ճյուղի կազմակերպությունների աշխատողների աշխատավարձերի պարտքերի կարգավորում	ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	31.12.2011թ.
3	ՀՀ գազաքիմիական ճյուղի համակարգաստեղծ կազմակերպությունների՝ հումք և էներգառեսուրսներ մատակարարողների հանդեպ ունեցած պարտավորությունների կարգավորում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն	31.12.2011թ.
4	Ճյուղի ֆինանսական առողջացման նպատակով ՀՀ Կառավարության կողմից արտակարգ կարճաժամկետ միջոցառումների պլանի մշակում	ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	31.01.2012թ.
5	Ճյուղի առանցքային կազմակերպությունների ֆինանսական առողջացման միջնաժամկետ պլանների և գարգացման ռազմավարական պլանների համաձայնեցում	ՀՀ ֆինանսների նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	31.01.2012թ.

N ^o	Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Ժամկետ
ՀՀ գազաքիմիական ոլորտի պետական կարգավորման մեխանիզմների կատարելագործման միջոցառումներ			
6	Ճյուղի վերակառուցման Ծրագրի համար հատկացվող միջոցների նպատակային օգտագործման հսկողության մեխանիզմների մշակում	ՀՀ ֆինանսների նախարարություն	31.12.2011թ.
7	Գազաքիմիական ճյուղի կազմակերպություններում կառավարման համակարգի օպտիմալացում, ներառյալ նոր օպերատորի հետ պայմանագրի կնքման միջոցառումները՝ նպատակաուղղված համակարգաստեղծ կազմակերպության վերակառուցման ծրագրի իրականացմանը, ինչպես նաև ոլորտի կազմակերպությունների կողմից որակի մենեջմենթի համակարգի, բնապահպանական մենեջմենթի համակարգի, առողջության պահպանության և աշխատանքի անվտանգության ապահովման մենեջմենթի համակարգի միջազգային սերտիֆիկատների ստացման միջոցառումները	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն	31.01.2012թ.
Գազաքիմիական ճյուղի ունեցվածքային համալիրի վերակառուցում և տեխնոլոգիական աուդիտ			
8	Ճյուղի վերակառուցման Ծրագրում ներառված կազմակերպությունների հիմնական ֆունդերի աուդիտ և դրա արդյունքներով ՀՀ Կառավարության եզրակացության նախապատրաստում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	31.01.2012թ.
9	Գազաքիմիական ճյուղի կազմակերպությունների գոյքային համալիրի վերակառուցման պլանի մշակում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	31.12.2011թ.
10	Ճյուղի կազմակերպությունների մտավոր սեփականության օբյեկտների ռեգիստրի ստեղծում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	31.01.2012թ.
11	Ծրագրի մասնակից ճյուղի կազմակերպություններում մշակվող և կիրառվող տեխնոլոգիաների լիցենզային մաքրության պաշտպանության և ապահովման միջոցառումների պլանի մշակում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	31.01.2012թ.
Ենթակառուցվածքային օբյեկտների վերականգնում և զարգացում			
12	Էներգաապահովման նոր ճյուղային համակարգի ստեղծում, ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և ՀՀ կառավարության կողմից հաստատում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	30.06.2013թ.

N ^o	Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Ժամկետ
13	«Նաիրիտ Գործարան» ՓԲԸ համակարգաստեղծ կազմակերպության սառնամատակարարման գործող համակարգի վերակառուցում և նոր համակարգերի շինարարություն, ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և հաստատում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	30.06.2013թ.
14	«Նաիրիտ Գործարան» ՓԲԸ համակարգաստեղծ կազմակերպության ջրամատակարարման գործող համակարգի վերակառուցում և նոր համակարգերի շինարարություն, ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և հաստատում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	30.06.2013թ.
15	«Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ի գիտահետազոտական բազայի հիման վրա տեխնոպարկի (կամ տեխնիկաներդրումային տիպի հատուկ տնտեսական գոտու) ստեղծում	ՀՀ կրթության և գիտության նախարարություն ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ ֆինանսների նախարարություն	31.12.2012թ.
16	Գազաքիմիական ճյուղի լոգիստիկայի կատարելագործման համար տրանսպորտային ենթակառուցվածքի զարգացման միջազգային ծրագրերի՝ ՀՀ կառավարության կողմից հավանության արժանացած պրոտֆելի մշակում	ՀՀ տրանսպորտի նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	30.06.2012թ.
17	Գազաքիմիական և հարակից ճյուղերի փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման աջակցության պետական ծրագրի մշակում: «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ համակարգաստեղծ կազմակերպության շուրջ «նորարարական գոտու» ստեղծում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	31.01.2012թ.
Գազաքիմիական և հարակից ճյուղերի նոր արտադրական հզորությունների վերականգնում, վերակառուցում և շահագործման հանձնում			
18	«Նաիրիտ Գործարան» ՓԲԸ համակարգաստեղծ կազմակերպության արտադրական կարողությունների վերականգնում, վերակառուցում և շահագործման հանձնում, ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և հաստատում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	30.06.2012թ.
19	«Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ի հիման վրա ճյուղային կլաստերի նոր արտադրությունների ստեղծում, ներառյալ նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակում և հաստատում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն	31.12.2015թ.

N ^o	Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Ժամկետ
Արտադրության բնապահպանական անվտանգության ապահովում			
20	Ճյուղի կազմակերպությունների արդիականացման և արտադրության գործարկման պետական բնապահպանական փորձաքննության անցկացում	ՀՀ բնապահպանության նախարարություն,	31.12.2012թ.
21	Ճյուղի կազմակերպությունների արդիականացման և արտադրության գործարկման անկախ բնապահպանական փորձաքննության անցկացում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն	31.01.2011թ.
22	Հերոկայցված գազերի իզոթերմիկ պահպանման պահիցների կառուցում և շահագործման հանձնում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն	30.06.2013թ.
23	Ցածր արդյունավետության էլեկտրական ֆիլտրերի փոխարինում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն	31.12.2012թ.
24	Գազանջատման արտադրամասերում մխացային ճնշակների փոխարինում տուրբաճնշակներով	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն	30.06.2013թ.
25	Քլորաբենային կաուչուկի արտադրությունում կաուչուկի չորանոցների փոխարինում օդի նվազ ծախս ունեցող ժամանակակից տեսակներով	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն	30.06.2013թ.
26	Քլորաբենային կաուչուկի արտադրամասերում օդափոխիչ ագրեգատների կողմից արտանետվող և օդում պարունակվող օդաանիկի կատալիտիկ լրայման համակարգի ներդրում	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն	30.06.2012թ.

№	Միջոցառման անվանումը	Պատասխանատու	Ժամկետ
27	Օրգանիկի կատալիտիկ լրայրման լրացուցիչ վառարանների ներդնում	ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն	30.06.2013թ.

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության գազաքիմիական ճյուղի վերակառուցման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

1.	Անհրաժեշտությունը
	<p>ՀՀ գազաքիմիական ճյուղի վերակառուցման ծրագրի ընդունումը ռազմավարական նշանակություն ունի ՀՀ տնտեսության զարգացման համար: Ճյուղի վերակառուցման ծրագրի իրականացումը էապես կնպաստի արտադրության աճին, արտահանվող արտադրանքի ծավալների ավելացմանը, կստեղծվեն լրացուցիչ աշխատատեղեր, զուգահեռ կաշխատեն այլ արտադրություններ և ծառայություններ:</p>
2.	Ընթացիկ իրավիճակը և խնդիրները
	<p>ՀՀ գազաքիմիական ճյուղը ավանդաբար ՀՀ տնտեսության համար ունեցել է համակարգաստեղծ նշանակություն: Գազաքիմիական հիմնական ձեռնարկությունները ստեղծվել են նախորդ դարի կեսերին՝ ԽՍՀՄ նավթաքիմիական համալիրի շրջանակներում: Գազաքիմիական ճյուղի հիմնական ձեռնարկություններից է «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ն, որը տիրապետում է 20-ից ավելի քլորոպրենային և բուտադիենից կաուչուկների ու լատեքսների արտադրության տեխնոլոգիաների: «Նաիրիտ Գործարան» ՓԲԸ-ն իր արտադրողականության լավագույն շրջանում (1987թ.) արտադրել է քլորոպրենային կաուչուկի համաշխարհային շուկայի 15%-ը:</p> <p>ՀՀ գազաքիմիական ճյուղի անկումը սկսվել է 1989թ.-ին՝ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո: 1993թ.-ից սկսած արտադրությունը մասնակիորեն վերականգնվեց, սակայն 2009թ.-ից համաշխարհային տնտեսական ճգնաժամով պայմանավորված արտադրության ծավալները կտրուկ անկում ապրեցին:</p>
3.	Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը
	<p>ՀՀ կառավարության ծրագրերի իրականացում, տնտեսության արտադրական ճյուղերի զարգացմանը խթանում:</p>
4.	Կարգավորման նպատակը և բնույթը
	<p>ՀՀ կառավարության սույն որոշման նախագծով հավանության է արժանանում ՀՀ գազաքիմիական ճյուղի վերակառուցման ծրագիրը և հաստատվում է այդ ծրագրի իրականացման միջոցառումների պլանը:</p>
5.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք
	<p>ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմ, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմ:</p>
6.	Ակնկալվող արդյունքը
	<p>ՀՀ գազաքիմիական ճյուղի վերակառուցում, արդյունավետության բարձրացում և զարգացում:</p>
7	Այլ տեղեկություններ (եթե այդպիսիք առկա են)
	-

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության գազաքիմիական ճյուղի վերակառուցման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության գազաքիմիական ճյուղի վերակառուցման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտություն չկա:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության գազաքիմիական ճյուղի վերակառուցման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության գազաքիմիական ճյուղի վերակառուցման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում: